ցիկ մարմարաշէնսն, և տարեալ 'ի Սիծի-լիայ, ինքն ևս 'ի զօրացն իւրեանց սպա-նաւ:

Կոստանդիանոս Ե. երրորդ սկսաւ յամի Տեառն ՈԿԸ. ինքնակալեալ ամս ԻԷ. և ոմանք ԻԶ. ամ ասեն, և էր երկաբնակ. սա արար ժողով 'ի Կոստանդնուպօլիս ՐՃԻ. Եպիսկոպոսաց. սա վճարեալ զկեա-նըս իւր 'ի Կոստանդնուպօլիս՝ մեռաւ անդ:

Յուստինիանոս երկրորդ սկսաւ յամի Տեառն ՈՁԵ. ինքնակալեալ ամս Ժ. և ոմանք ԻԳ. ասեն: Սա հակառակ էր երկա-բնակաց: Լևոն պատրիկն հատեալ զ.քիթ նորա՝ առաքեաց յաքսորս, և ինքն թագա-ւորեաց 'ի տեղի նորա:

Լէոն երկրորդ սկսաւ յամի Տեառն ՈՂԵ. ինքնակալեալ ամս երեք. էր միա-բնակ: Զսա դաւեալ Տիբերիոս կամէր ու-նել և առաքել յաքսորս. զոր իմացեալ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան